

Résumé

GÉORG DPIR TÈR HOVHANNISEAN (PALATEC'I)
ET LES MEKHITARISTES

P. SAHAG DJEMDJEMIAN

C'est la deuxième et dernière partie de l'ample correspondance de Gëorg Hovhannisean avec les Pères de St. Lazare faisant suite à la première partie, publiée dans «Bazmavêp» (1982, 3-4, p. 294-319) et précédée d'une longue étude sur les relations de Gëorg avec les Mekhitaristes («Bazmavêp», 1982, 1-2, p. 96-154). Cette correspondance qui est à la base de l'étude du Père Djemdjemian, est une source d'une valeur inestimable pour l'histoire de plusieurs manuscrits et éditions arméniens, surtout de ceux qui, donnés par Gëorg, ont été recueillis par la suite dans la bibliothèque monastique de St. Lazare.

La publication s'achève avec une bibliographie de Gëorg Hovhannisean, rédigée par Mr. Kévork Pambukciyan, archiviste du Patriarcat Arménien d'Istanbul, auquel vont les remerciements de l'éditeur.

ՆՈՐԱՅՐ Ն. ԲԻԻԶԱՆԴԱՑՈՒ ԿԵԱՆՔԸ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՒ ԴԻԻԱՆԻ ՑԱՆԿԸ

Ա.— ԿԵԱՆՔԸ (1845–1915 թթ.)

Անձը, որ յայտնի է Նորայր Ն. Բիւզանդացի անունով, բանասէր եւ բառարանագիր է: Նրա հայերենագիտական վաստակից ոմանց ծանօթ են յատկապէս նրա երեք աշխատութիւնները՝ Հայկական բառաքննութիւն (Կ. Պոլիս, 1880), Բառագիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայերէն (ն. տ., 1884) տւ կորիւն վարդապետ եւ նորին քարգմանութիւն (Թիֆլիս, 1900): Մասնագէտներ տեղեակ են նաեւ նրա հրատարակած բանասիրական յօդուածներին, է՛լ աւելի քչեր՝ նրա անտիպ բաղմամբիւ գործերից ոմանց, որոնց մի քանիսի մանրաժապաւէնները երեւանում են՝ Մաշտոցեան Մատենադարանում եւ Գիտութիւնների Ակադեմիայի կենտրոնական գրադարանում, մէկին էլ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանում (Անթիլիաս)։ Վարդուղի Ղուկասեանց Եղբայրների Հաստատութեան գրադարանը (Ժնեւում) գնեց (չնորհիւ տողերիս հեղինակի) շատերի լուսապատճէնները։ Բոլորն էլ հանուած են քանասէրի դիւանից, որն այժմ Շուէդիայի Գէօտեբորգ (Göteborg) քաղաքի համալսարանի կենտրոնական գրադարանումն է։ Նրա տպագիր եւ ատաւել եւս անտիպ գործերի ամբողջութիւնը մտածել է տալիս, որ հեղինակը հայերենագիտութեան՝ քառարանագրութեան, բանասիրութեան, գրաբար բանագրերի սրբագրութեան, հայ հին եւ միջնադարեան գրականութեան գիտակ հակառակից է։

Սակայն ի տարբերութիւն ուրիշ բախտաւորների, նա իր գիտական եւ կենցաղային գաղափարներով ու գործերով չ'անխնայ է իր ժամանակը, տեղադրանքը է շատերին, որոնք ոչ միայն չեն հատկացել ու զնահատել նրան ու գրածները, չեն նպաստել հրատարակութեան, այլեւ չեն սպառել անձնական զոհողութեամբ լոյս ընծայածները, նրան դառնացրել ու հալածել են։

գիրք ի պաշտօններէն լեզուէ ի հայերէն» հոյակապ գործին: Իր ընթերցումները ընթացքում նա յայտնաբերել է հարիւրաւոր բառեր, որոնք չկան «Նոր հայկազեան» երկհատոր ստուար քառարանում. նա լցրել է մեծադիր տասը տետր աշխարհի բառերով՝ իրենց վկայութիւններով հանդերձ, որ նա վերնադրել է «Բառք արտաքոյ Հայկազեան քառարանին»: Սրանք այսօր էլ չեն կորցրել իրենց կարեւորութիւնը եւ արժանի են հրատարակման: Այս աշխատանքը նա շարունակել է ամբողջ կեանքում, եւ այս նշումները նոյնպէս դիւանում են առանձին կամ նրա աշխատութիւններում:

Այս բոլոր զբաղմունքներով հանդերձ երիտասարդ վարդապետը հողեկան տառապանքների մէջ է տուալտել. հողեկան հիւանդութիւնը, որի անունը չի տարիս նամակներում, աղբել է բնաւորութեան վրայ. դարձել է դերգալուն, խորապէս մեկամարդոտ, յաճախ եւ առանց լուրջ պատճառի արտասուող. աղբել է նաեւ մարմնի վրայ: Նա այս բոլորը քողարկուած բառերով յայտնել է 1868 թ. Յունիսից մինչեւ 1869 թ. Ապրիլը վանքից ծնողներին, հարազատներին, յատկապէս ոմն Հօր, բարեկամներին եւ հօրաքեռորդուն՝ Հ. Գար. Զարբհանալեանին պրած կակծալի նամակներում, որոնց սեւագրութիւնը դիւանի 4:0, 4:3 մատեանն է, չհամարակալուած (եւ մեր էջակալած) 30 մեծադիր էջ:

Հայր Յարութիւնին խնամող խտալացի բժիշկը 1869 թ. դարնանը խորհուրդ է տալիս Աբբահօրը, որ հիւանդին իր ծննդավայրն ուղարկի օդափոխութեան եւ ծնողները տեսնութեան. ուստի այդ տարուայ Մարտի Ծին նա գրում է մօրը. «Քիչ ատենէն պաշտիս պիտի արցունքներդ, մխիթարութեամբ եւ խնդումով վեցուի պիտի սիրող, եւ այն ատեն պիտի հասկնաս թէ ես ալ ո՛րչափ կը սիրեմ զհրամանքդ եւ ի՛նչ պառն, ի՛նչ տխուր օրեր անցուցեր եմ՝ հրամանքդ հեռու եւ անուշ գրուանքներէդ զրկուած ըլլալու համար» (էջ 27). ապա մի քանի օր տետրոյ՝ «Միւրեւի ծնողք քմ, կրնամ զուրցել որ այս նամակիս պէս ուրախալի նամակ մը երբեք առած չէիք փգմէ, վասն զի ասով կ'իմացնեմ ձեզի որ քիչ ատենէն ձեր քովը պիտի դառնամ» (էջ 28): Նոյն 1869 թ. Մարտին, հօրաքեռորդուն՝ «Զիս հողացող բժիշկը եւ հոստեղի մեծերը պատշաճ տեսան որ մարմնոյ եւ արտի ունեցած այլեւայլ նեղութեանցս համար հայրենիք դառնամ ընտանեացս քով: Ուրախութիւնս շատ մեծ է» (էջ 28):

Դիւան, Թղթ. Fol. 4:0, 4-14, Վաւ. 4:7, «Նամակք» խորագրուած մեծադիր 49 էջանոց տետրը Պոլիս վերադարձից յետոյ գրած նամակների սեւագրութիւններն են, ըստ որոնց հետեւում ենք նրա կեանքին: Ծնողների տանը երկու շաբաթ մնալուց յետոյ (նաւով հասել է 1869 թ. Ապրիլի 11ին) տեղափոխուել է հօրաքեռորդուն՝ Հ. Գարեգին Զարբհանալեանի տունը, որպէս քահանայ ծառայել է հայ

վաթողիկէ եկեղեցում, պատարագել է, մինչեւ իսկ վարդապետական դաւադան բռնելու իրաւունք ստացել: Զբաղուել է իր Ֆրանսերէն-հայերէն բառարանով եւ տաղերով:

1870ական թթ. պոլսահայութիւնը ցնցող եւ պառակտող հասունեան-հակահասունեան պայքարին նախ չի մասնակցում: 1870 թ. Յունուարի 16ին հետեւեալն է գրել Ս. Ղազարում մնացած պոլսեցի իր մտերիմ բարեկամ Հայր Սահակին (որի աղջանունը տետրի վերջի մի նամակում է՝ Հէքիմեան). «Ես՝ պիտեա զի խոհեմ եւ զգաստ եմ եւ չմտանեմ յայնալիսի սատանայական եւ նոյնի զօմբլօսու» (էջ 15):

1870 թ. Ապրիլի 17ին յայտնում է Հայր Սահակին, որ Քաղկեդոնի կամ Քաղը Քէօյ գիւղի նորահաստատ Մխիթարեան վարժարանում է պաշտօնավարում. հասունեան խնդիրների պատճառով նրան եւ 37 քահանայի զրկել են «ի պատարագելոյ եւ յամենայն քահանայական պաշտամանց» (էջ 18): Իր ապրուստը մասամբ գոյացրել է մասնաւոր դասեր տալով Քաղկեդոնի Մխիթարեան վարժարանը յաճախող Ներսէս եւ Արամ եղբայրներին, որոնց հայրը հարուստ վաճառական է եղել, Գրիգոր Ներսէսեան. «Մեծապատիւ էֆէնտի, նախ եւ առաջ պարտք կը համարիմ Զեղի յայտնել իմ խորին շնորհակալութիւնս փոխանակ այն վստահութեան եւ համարմանը, որով կարեցիք զիս դաստիարակ Զեր Ներսէս եւ Արամ որդւոցը» (էջ 39). նոյն տեղում՝ «Սովորական դասերէն դուրս՝ պարապոյ եւ հանգստեան ժամերուն ինծի հետ կ'ընեն շաբաթը երկու անգամ հայկաբանութեան կրթութիւն, երկու անգամ պաշտօններէնի կրթութիւն, երկու անգամ անդիւրիներէն Արամի հետ եւ երկու անգամ ալ խտալերէն Ներսէսին համար, եւ շատ պոհ եմ իրենցմէ» (էջ 42): Նրա դաստիարակութիւնը փոխուել է պատիարակ-խնամակարութեան ևօղանում եւ Փարիզում. հետեւենք նրան, դարձեալ փր նամակների սեւագրութիւններով:

Դիւանի Թղթ. 4:0, Վաւ. 4:3ը այն նամակների սեւագրութիւններն են, 72 մեծադիր էջ, որ Լօղանից եւ Փարիզից շաբաթը մէկ կամ երկու անգամ մանրամասն գրել է իր երկու սաների՝ Նոյն Ներսէսի եւ Արամի հօրը, Պոլիս. հարուստ վաճառականը նրան է յանձնել իր երկու որդիներին, որպէսզի լինի նրանց դաստիարակը, աչխարհարարի եւ դրաբարի ուսուցիչը, ծախսարարը եւ հակիչը արտասահմանում առկորելիս: Այդ տարիներին Հ. Յ. Թ. (Հայր Յարութիւն Թերզոնց) է տոբրագրել վաճառականի եղբորը պրած նամակները, իսկ տրան ուղղածները՝ Պ. Մ. «Մոնարհ ծառայ»:

Յարութիւն վարդապետ խնամակալ-դաստիարակն իր երկու սաների հետ, անդրանիկը 18 տարեկան, միւսն աւելի փոքր, Լօղան է հասել 1872 թ. Հոկտեմբերի 21ին եւ նրանց տեղաւորել իրենց հօր ընտրած դպրոցում որպէս գիշերօթիկ. նա պարագել է միայն աչ-

կում բողոքում է, որ Հ. Ն. Ակինեանը նրա անունը կրճատելով դարձրել է «Նորայր Բիւղանդացի», Փրանսերէն Néandre de Byzance⁹, առանց Norayrի:

Նորայրը 1880 թ. Պոլսում հրատարակել է իր «Հայկական բառաքննութիւն» փոքրիկ, բայց շատ կարեւոր աշխատութիւնը սեփական դրամով. ճիշտ է, որ յետագայում դրա համար ստացել է 500 Փրանկ Իզմիրեան մրցանակից: 1879-1882 թթ. Պոլսում դրադում է իր Փրանսերէն-հայերէն բառարանի տպագրութեան պատրաստութեամբ: Հաւատարիմ մնացած մի քանի բարեկամներ յանձնաժողով են կազմում եւ կադմակերպում բաժանորդագրութիւնը: Նորայրը տպել է տալիս բառարանից մի մամուլ եւ ուղարկում ամէն կողմ՝ քննադատութեան եւ վարձիքի համար: Թերթերում մշակուիլի ծանուցում է դնում եւ խոստանում, պահանջուած տասն հազար թրքական ոսկիի կէսին կանխիկ բաժանորդագրութեամբ գոյանալու դէպքում՝ սկսել բառարանի տպագրութիւնը եւ կանխիկ մշակուող իւրաքանչիւր բաժանորդին նուիրել իր «Հայկական բառաքննութիւն»ը: Տարի ու կէտից յետոյ գոյանում է 150 բաժանորդ՝ 1½ օսմանեան ոսկիով: Նորայրը, ճարահատեալ, սկսում է տպագրութիւնը, սակայն ո՞ր դրամով. պարզապէս Աեւմ. Եակոբսոնի փողով, որի մասին հաւանաբար ոչ ոքի չէր յայտնել:

Վենետիկում նրա մահուան առթիւ արատրաստուած մի էջ դրացուցակում նշում է, որ Նորայրը թողել է Փրանսերէն-հայերէն իր բառարանից 1000 օրինակ, որոնք այսօր անպատանելի են*: Յուշակը Վիեննայի Միլիթարեան վանքումն է, Հ. Ն. Ակինեանի գիւղանում: Նոյնը՝ իր կտակում, որի պատճէնը մեր ձեռքում է:

Նորայրը՝ Սեւմ. Եակոբսոնի հետ ամուսնացել է Պոլսում, 1881 թ. Յունիսի 18ին, ինչպէս նշուած է գիւղանում պահուող վկայականում. թուականը յայտնել է նաեւ Քուչուկին¹⁰: Դիւանում պահուում է Սեւմ. Եակոբսոնի քրոջ մի նամակը՝ Ստոկհոլմից ուղղուած Փարիզ, Նորայրին, ուր նամակագիրը խորհուրդ է տալիս չամուսնանալ իր քրոջ հետ, քանի որ նրա առողջութիւնը թոյլ է, եւ Նորայրը փող անգամ չունի նրա բուժման եւ ընտանիքի միւս ծախսերը հոգալու համար:

9. Տէ'ա Մ. ՄԻՆԱՍԵԱՆ:

10. ՊՀ, 1974, 3, էջ 133:

*) Ս. Ղազարի գիւղանին մէջ իր պահուի պայմանագրութիւն մը, որով յանուն Միաբանութեան՝ Ընդհ. Արքահայր Գեղայ. Հ. Իզնատիոս Արքեպս. Կիւրեղեան յանձնառու կ'ըլլար դնելու եւ տէր կանգնելու Նորայրի ամբողջ գիւղանին: Պայմանագրութիւնը ստորագրուած է միայն Արքահայր կողմէ եւ, անշուշտ, վերջնական համաձայնութեան մը կարելի չէ եղած յանգիլ, մեղի անձանթ պատճառներով: Ուստի բաղդիքի աղջ հազար օրինակներն ալ, Նորայրի մահէն ետք, փոխադրուած են Շուէտ. տես ստորեւ, էջ 48 (ԽՄԲ.):

Արդարեւ, 1881ի Նոյեմբերի 9ին Նորայրը գրել է. «Հաղիւ հաղամասկան ապրուստս կը ճարեմ այժմ» (4:0, 5:19, էջ 9): Պոլսից գրուած վերջին նամակը, որ պահուել է գիւղանում, 1882 թ. Մայիսի 10ից է (4:0, 5:19) ու թերի է, քանի որ վերջին թերթում գրուած սեւագիրը՝ 1882 թ. Մարտի 9ից, չի աւարտուում, մնում է «հաւատարիկ» (վերջին բառով): 1882ին Յունիս եւ Յուլիա ամիսներին եղել է Ստոկհոլմում կնոջը մօտ: Յամենայն դէպս Նորայրի Փրանսերէն-հայերէն բառարանի հրատարակման տարեթիւը 1884 է: 1882ի վերջաւորութեանը տպագրութեան աւարտման գործը հաւանաբար յանձնել է ուրիշին, քանի որ Քուչուկին գրել է. «1882ի Դեկտեմբերէն ի վեր կը բնակիմ ի Ստոկհոլմ»¹¹: Պոլսում եղած ժամանակ Նորայրը մտադիր է եղել հրատարակել հայերէն միջնադարեան տաղեր, ինչպէս լսուած է նամակներում, մինչեւ փակ բաժանորդներից կէս մէկիտի է հաւաքել, բայց դա նորան չի յաջողուել, եւ փողը յետ է վերադարձրել:

1882 թ. Դեկտեմբերից մինչեւ 1899 թ. Մարտի 30ը՝ կնոջ մահուան թուականը, Նորայրն ապրել է Միակ պարապմունք ունենալով՝ զուտումնափրութիւն հայ լեզուի»¹² եւ հին տւ միջնադարեան գրականութեան:

Վանքից եւ Պոլսից գրած նամակներում Նորայրը քաղմիցս ասել է, թէ որքան է վախենում ձմեռուանից ու նրա ցրտերից: Գուցէ այս պատճառով տաք կլիմայի մէջ մտնելու եւ դռնէ մի հայ մատենադարանի մօտ լինելու համար եւ նախկին յուշերի ուժով Նորայրը 1903 թ. Սեպտեմբերի 26ին տեղափոխուել է Վենետիկ, փրենց տան հաւատարիմ եւ տարիքն առած սպասուհու հետ, բնակուել է Sant' Angelo, Ponte dei Frati, 3536, II P. հասցեում: Ն. Ակինեանին հետեւելով՝ Ա. Ա. Արքահամեանը գրել է, թէ Նորայրը Հոտմից անցնելով Վենետիկ է հասել 1904 թ.¹³ ապակն գիւղանի գոնէ 4:0, 12:20 վաւերագիրը, որ հանդուցեալ կնոջը՝ յուսահատական մի պահին մահամբ դրաբար եւ մասամբ Փրանսերէն ուղղած չորս էջ ողբերգում եւ աղօթք է, խիստ յուզումնալից, թուագրուած է 11-12 Նոյեմբերի 1903 թ., Վենետիկ: «Յիշելիք» վերնագրուած թղթերի վրայ Նորայրը մանրամասն նշել է իր վերջին տարիների առօրեայ ծախսերը, երբեմն բանասիրական յայտնաբերումները, Ս. Ղազարից եկող հաղուածագ աղբիւրների անունները եւ այլն: Փնքն էլ Վենետիկ ժամանումից մի քանի տարի յետոյ աղբիւր է Ս. Ղազար, տառնալով յատուկ հրաւէր, եւ աշխատել է ձեռագրերի վրայ: Հայրերից ոմանք

11. ՊՀ, 1974, 3, էջ 238:

12. ԱՊ, էջ 238:

13. ՀԱ, 1921, էջ 35 եւ ՊՀ, 1974, 3, էջ 21:

նրան քննութեան են քերել իրենց բանասիրական աշխատանքները, որ նա կարգացել է համբերութեամբ եւ յայտնել զիտողութիւնները: Այդ տարիների ձեռագիրը աւելի խոշոր է, աւելի սոգեղ ու դողդոջուն: Նորայրը ծանր հիւանդ էր, ամիսներ մնացել է հիւանդանոցում, սաստիկ տանջուել, վերջապէս վիրահատութեան ենթարկուել՝ առանց վերջնականապէս քուժուելու. այդ տաժանագին օրերին միակ հաւատարիմ բարեկամը եղել է պառաւ սպասուհին, որին իր կտակի մէջ Նորայրը նուիրել է մի մեծ դամար: Անտիպ ձեռագրերը ցոյց են տալիս, որ նա կեանքի վերջին տարիներին էլ շարունակել է կարդալ, նորանոր յայտնութիւններ կատարել ու լրացնել իր շատ տարիներ առաջ կատարած աշխատանքները. նշումները գրեթէ միշտ թուագրուած են տարով ու ամսաթիւով: Գտանք, որ վերջին նշումը կատարել է «Նախնիք» ստուգարածաւալ (երեք հատոր) դործում՝ 29 Հոկտ. 1915: Զգիտենք, ի՞նչ հիման վրայ Ս. Լօրելին գրել է, թէ Նորայրն աշխատել է մինչեւ կուրացում («Էջմիածին», էջ 66): Ըստ Ն. Ակիւնեանի (ՀԱ, 1921, էջ 86), Նորայրը մահացել է 1916ին, բայց ամիսն ու օրը չի կարողացել յայտնաբերել: Թէոդէիկի «Ամէնուն Տարեցոյցը», 1921, էջ 323, «Դարձեալ 1916 տարւոյ կորուստներ. — Նոյալը Բիւզանդացի (նշ. քանդակ, բառագիր, աստուգարան եւ Ֆրանսագիր, 71 տարու, Խտալիա)»: Ս. Լօրելին եւ, հաւանաբար նրան հետեւելով, Ա. Ա. Աբրահամեանը գրել են, թէ մահացել է 1915ին, սակայն առանց տեղեկութեան աղբիւրը նշելու: (Ժալ ՀԱՀի գրածը, թէ նա վախճանուել է Պոլսում, միանգամայն սխալ է):

Fredrika-Bremer-Förbundet հաստատութիւնը 1983 թ. Հոկտեմբերի 10ի նամակով մեզ յայտնեց, որ Նորայրը մահացել է Վենետիկում 1915ի Դեկտեմբերի 25ին, ինչպէս վկայում է նաեւ նրա գիւանդում պահուող մի թերթիկ:

Նոյն հաստատութիւնը նոյն օրը մեզ ուղարկեց նաեւ Նորայրի ինքնագիր Ֆրանսերէն լեզուով կտակի մեքենագրուած պատճէնը. Նորայրը այդ հաստատութեանն է կտակել իր կնոջից ժառանգած 110.000 շուէդական քրոնը (եւ ոչ թէ 125.000 կամ 150.000 կամ 35.000 դոլար, ինչպէս գրել է Ս. Լօրելին՝ ճիշտ չհասկանալով Նորայրի այն կամքը, որ յետագայում դրամագլուխը չպիտի գերազանցի 125.000 քրոնի դամարը). նրան է կտակել նաեւ իր բոլոր գրքերը կամ դրողարանը, ձեռագիր աշխատութիւնները եւ իր Ֆրանսերէն-հայերէն բառարանի չվաճառուած 1.000 օրինակները, որ նա 25 արկղանքում ի պահ պահել է եղել Ստոկհոլմի մի դրամատանը: Կտակը ստորագրել է Վենետիկում, 1910 թ. Յունիսի 2ին: Նորայրի գիւանդում պահուած է մի նամակի տեղագրութիւն, ուր նա աշխատում է համոզել նշուած հաստատութիւնը, որպէսզի ընդունի իր ողջ հարբատութիւնը, քանի որ այն պատկանելիս է եղել իր կնոջը՝ մի շուէ-

դուհու, եւ այն պիտի մնայ Շուէդիայում, բարեփրական նպատակների համար: Նամակը 1915ի Յունիսի 9ից է, Ֆրանսերէն: Նորայրի դրած պայմաններից պիտաւորն այն է, որ իր աճիւնը փոխադրուի Ստոկհոլմ, իր կնոջ դամբարանի մօտ իր իսկ կառուցել տուած չիլիմի մէջ: Նրա փափաքը կատարուած է 1924ի (Դեկտեմբերին՝ ըստ Լօրելու, էջ 66): Մեզ դեռ յայտնի չէ, թէ նրան պատկանող իրերն ինչ վիճակում են տեղափոխուել Ստոկհոլմ, ո՞ւմ ձեռքով, փնչպիսի՞ խնամքով, քանի որ նրա աշխատութիւններից, որոնք աւանձին թերթերի վրայ են, անկաղմ (բացի մի քանիսից), պակասում են բաղմաթիւ մէջեր:

Նորայրն իր ամուսնութիւնից զաւակ չի ունեցել, իսկ Ս. Լօրելին Ստոկհոլմում որոնել է նրա «շուէդացած» ժառանգներին (էջ 66):

Նորայրի գերադոյն եւ միակ նպատակը եղել է օգտակար լինել իր ազգին փր գլխոթութեամբ: 1876 թ. Յունիսի 9ին, Արդիւ Ազիզ սուլթանի «ինքնապանութեան» առթիւ, իր դաստիարակած երկու սաների հարուստ հօրը գրում է Պոլիս. «Իմ մաղթանքս է որ Տաճկաստանի նոր յեղափոխութիւնը Հայոց ազգին օգտակար ըլլայ, եւ այսուհետեւ ո՛չ զաւառներու մէջ լստին հայ դիւղերու քանդումներ եւ դիւղացիներու ապանութիւններ քիւրտերու ձեռքով, ոչ ալ մայրաքաղաքին մէջ սնանկութիւններ եւ սնանկութեանց հետեւանքով աղէտալի վախճաններ»¹⁴:

Նորայրը, երբ արդէն շուէդական քաղաքացի է եղել 1885 թ. Նոյեմբ. 12ին, 1896ին Ստոկհոլմում մասնակցել է հայասիրական երոյթների, ջարդերը դասապարտող յօդուածներ է գրել շուէդական թերթերում (պատճէնները գիւանդում են Ֆրանսերէն). 1900 թ. Նոյեմբերի 2ին Գուշուլին գրել է. «Գրած եմ շուէդերէն յօդուածներ յAftonbladet եւ ի Stockholms Dagblad լրագիրս Ստոքհոլմի, մերայնոց արտասուելի կոտորածներուն առթիւ. յօդուածոցս արդիւնքն եղաւ 2000 կրոնա (= 1000 ռուբլի) ատանալի ի Շուէդացուն ի նըպաստ որդոց եւ այրեաց, եւ դրամն յղուեցաւ ի Լոնդոն առ Duc de Westminster»¹⁵:

Նոյնիսկ իր գործերի սոսկադրութեան համար, որոնք ազգի համար էին, Նորայրը հարուստներից փող մուրալու չի նուաստացել. «Ի՞նչ կղած են ցարդ մեր հեղինակքն, մեր լրագրապետքն, մեր դրաւդէտքն. մէյմէկ մուրացկան, մէյմէկ գերի մեր էֆէնտիներուն եւ աղաներուն Բէֆին. փոխանակ ես աղաներուն ոտքը ինչալու եւ մուրալու, պէտք է որ աղաներն ինծի դիմեն, պէտք է որ 1½ ռուբլի վճա-

14. Դիւան, 4:0, 4:1-5, Վաւ. 4:3, էջ 157:

15. ՊՀ, 1974, 3, էջ 239:

րեն կանխիկ եւ անմիջապէս, ապա թէ ոչ բաժանորդ չեմ ճանչնար զիրենք [Փրանս.—Հայ. բառարանի]: Եթէ յաջողիմ հին դրութիւնը փոխելու, կը շարունակեմ գրադիտութեամբ ծառայելու իմ ազգիս. եթէ չյաջողիմ, լաւագոյն կը համարեմ քիպրիթ-նի [լուցիկի վաճառող] ըլլալ քան թէ մուրացկան գրագէտ»¹⁶: Եթէ Նորայրը շարունակեց «գրագէտ» մնալ առանց մուրաբու կամ մանրամասն չափի լինելու, ապա փր կնոջ շնորհիւ էր, որը սակայն այնքան ազնիւ եւ նրան գնահատող է եղել, որ երբեք երեսին չի տուել, թէ «Իմ ստակովս մարդ եղար»: Իր հայերէն աշխատութիւններէ համար Նորայրը կեանքում երեք անգամ է փողով վարձատրուել՝ «Հայկական բառաքնութիւն» (500 Փր.) ու «Կորիւն վարդապետ եւ նորին թարգմանութիւնը» (1000 Փր.) որպէս մրցանակ, եւ «Քննադատութիւն Հայրուսակի», որ 500 Փրանկի գնել է Գուրտոն Լուսինեանը եւ նուիրել Վիեննայի Միլիթար-եաններին: Ինչպէս երեւում է, նրա կենդանութեան ժամանակ եղել են նրան գնահատողներ, օրինակ՝ Խրիմեան Հայրիկը, որն իր կաթողիկոսութեան օրով նրան նախ 1899 թ., ապա 1903ին հրաւիրել է էջմիածին Ս. Գրքի հրատարակութիւնը գլխավորելու համար: Նորայրը Քուլուկին յայտնել է, թէ սպասում է «Հոգեւոր Տեառնն երկրորդ նամակին»¹⁷. մասնակցել է Արեւելագէտների միջազգային 9րդ գիտաժողովին (Լոնդոն, 10 Սեպտ. 1891), վկայականով (դիւանում) եղել է Արեւելագէտների միջազգային միութեան անդամ:

Նորայրի մահից յետոյ նրան արժանապէս առաջին գնահատողը եղել է Հ. Ն. Ալիքեանը (ՀԱ, 1921, էջ 85-86). «Գրագէտ-բանասէր արդիւնաւոր գործիչ» (էջ 85), «Մեծ է արժանիքը Հայ բանասիրութեան համար» (ն. տ.), «Իւր բովանդակ կեանքն նուիրած էր [Նախնեաց գրական արտադրութեանց] ընթերցման, ուսումնասիրութեան, լուսաբանութեան» (ն. տ.), «Տարիներու ուսմամբ եւ խղճամիտ հետազոտութեամբ ամբարած էր մեծ հմտութիւն Նախնեաց երկերու, որպիսի քիչ տուած է Հայ բանասիրութիւնը» (ն. տ.). «Նորայրի գրչէն ամէն բան, ամէն տող թանկագին է Հայ բանասիրութեան համար: Նորայր իբրեւ բառաքնին՝ հեղինակութիւն էր եւ է. իւր ամէն մի վճիռներն ունին իրենց ետեւ ապացոյցներ. խղճամիտ են իւր ներկատողութիւնները, ամուր՝ հաստատութիւնները եւ հմտալից՝ տեսութիւնները: Նա բառագրքի մարդ էր» (ն. տ., էջ 96): «Բայց, — նկատում է Ն. Ալիքեանը — իբրեւ քննադատ չունէր այն ծանոց, հնարող միտքը, որ կը հեղինակէ: Այլոց հեղինակութիւնները քննութեան բովէն անցնել, լրացնել, ճշդել, ապացուցանել՝ այն իւր

16. Դիւան, 4:6, 5:19, էջ 16-17:

17. Վեհափառի նամակը հրատարակուել է «Բանբեր Երեւանի համալսարանի» հանդէսում, 1972, 1, էջ 175: Քուլուկին յայտնել է՝ ՊՀ, 1974, 3, էջ 240:

առաւելութիւնն էր: Նա հին դպրոցի մարդ էր. այնպէս ալ մնաց» (ն. տ., էջ 96): Ն. Ալիքեանը նոյն յօդուածում թուարկում է Նորայրի անտիպ թողած գործերից մի քանիսը՝ առանց դրանք տեսած լինելու. անտիպ թողած բաղմահատոր աւանդը «ծնանող» է, բայց ոչ «հնարող», «հեղինակող» եւ ուսուցող է, անմասն:

Նորայրի անտիպ վաստակը ներկայացնողը եւ երկրորդ գնահատողն ու հրատարակութեան կոչ անողը եղել է Սուրէն Երզնկեանը (Լօրէլի): Նրանից յետոյ Երեւանում Գ. Արքարեանը Նորայրին բնութագրել է որպէս «Հայ դասական բանասիրութեան այս բաղմահամուտ գործիչը»¹⁸: Բայց ԲՀԱ, 1962, էջ 85-ից մէջբերելով Նորայրի՝ Գիւտ քահանայ Աղանեանին դրած տողերը, թէ «Բոլորովին ուժասպառ եմ սրտնեղութեամբ եւ մտաւորական յոգնութեամբ: Յիսուն տարի է աւելի աշխատած եմ Հայ հին մատենագրութիւնը եւ մատենագիրները ուսումնասիրելով, աշխատած եմ ձրի եւ ձրի աշխատութիւնս հալած մաշած է զիս», նոյն Գ. Արքարեանը, աւանդութիւն դարձած ախար կրկնելով, գրել է հետեւեալ անճշտութիւնը. «Այսպիսի անմիլիթար վիճակում, նիւթակա մեծ կարիքի մէջ վախճանուեց մեծանուն գիտնականը 1915 թուականին, Վենետիկում» (ն. տ., էջ 35):

Ա. Ա. Արքահամեանը իր «Նորայր Բիւզանդացու կեանքն ու գիտական գործունէութիւնը» յօդուածում (ՊՀ, 1965, 3, 19-34) Նորայրին համարելով «Հայ դասական բանասիրութեան վաստակաւոր եւ րախտաւորների շարքում պատկառելի տեղ ունեցող» եւ «բաղմաշխատ գիտնական»՝ համառօտ, որքան թոյլ էին տալիս մի յօդուածի սահմանները, ճիշտ է վերլուծել ու ներկայացրել Նորայրի ապագիր որոշ գործեր եւ «Բառագիրք տտորին հայերէնի» բաղմահատոր անտիպը: Մի ամբողջ գիրք էր պէտք մեծ քանասէրի լոյս ընծայած մեծ ու փոքր աշխատութիւնները քննարկելու համար: Արժէքաւոր է նաեւ նրա առատ նամականին:

Նորայր Ն. Բիւզանդացու կեանքի այս համառօտ ուրուագիծն ամփոփում ենք հետեւեալ աղիւսակի մէջ:

18. «Էջմիածին», 1969, Ը-Թ, էջ 35, «վաստակաւոր գիտնական», էջ 36:

ՆՈՐԱՅՐ Ն. ԲԻԻԶԱՆԴԱՑՈՒ ԿԵԱՆՔԻ
ԳԼԽԱԽՈՐ ՊԱՀԵՐԻ ՏԱՐԵԹՈՒԵՐԸ

Ծնունդ Պոլսում (Պերա), Ստեփանոս Գազեզեան – ձիգմէնեան – Թէրզեան	16 Մարտ 1845
Մուտք Ս. Ղազարի վանքը 9 տարեկանում	1854 աշնանը
Քահանայական ձեռնադրութիւն, Հ. Յարութիւն Թերզոնց	8 Ապրիլ 1866
Ուսուցչութիւն Ռափայէլեան վարժարանում, Վենետիկ	1866–1868
Գրադարանավար եւ «Բաղմավէտ»-ի տեսուչ Ս. Ղազարում	1868–1869
Պոլիս ժամանում որպէս քահանայ	11 Ապրիլ 1869
Ուսուցչութիւն Քաղկեդոնի Մխիթարեան վարժարանում	1870–1872
Խնամակալ-դաստիարակ Լօղանում եւ Փարիզում [Սնշատում Մխիթ. Մխարանութեանէն] (ԽՄԲ.)	1872–1876 Օգոս.
Փարիզում Ֆրանս.–Հայ. բառարանի աւարտում	30 Յուլիս 1873
Նորայր Ն. Բիւզանդացի, Կրքեմն Նորայր, աշխարհական	1876–1879 Յնս.
Պոլսում Ֆրանս.–Հայ. բառարանի տպ. ձեռնարկում	1879–1882 Նոյ.
Ամուսնութիւն Օր. Սելմա Եակոբսոնի հետ	18 Յնս. 1881
Արձակուրդ Ստոկհոլմում	1882 Մայիս–Յնս.
Բնակութիւն Ստոկհոլմում	1882 Դեկտ.
Սելմա Եակոբսոնի մահը	30 Մարտ 1899
Տեղափոխում է Վենետիկ	1903
Մահ Վենետիկում	25 Դեկտ. 1915

Բ. – ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԾԱՆԿԸ

Ծան. – Աշխատութիւնները (գրքերը) եւ յօդուածները նշում ենք իրենց վերնադրերի աջքենական հերթականութեամբ՝ որոնումն ու ստուգումը դիւրացնելու նպատակով: Իր նամակներում նա ոչ միշտ լրիւ եւ ատուգօրէն է նշել վերնադրերը:

Ա. – ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Բառագիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայերէն, Կ. Պոլիս, 1884, 1299 էջ, մեծագիր:

2. Կորիւն Վարդապետ եւ նորին թարգմանութիւն, Տփղիս, 1900, ԻԷ–520 էջ:

3. Հայկական բառաքնութիւն, ուղղութիւն ընթերցուածոց մատենագրութեանց Նախնեաց եւ նշանակութեան բառից ինչ, Կոստանդնուպոլիս, 1880, ութածալ, 128 էջ: (Գ. Ստեփանեանը գրել է Բառաքնութիւն եւ մոռացել է ամենավերջին ինչ բառը: ՀՄՀում նոյնպէս Բառաքնութիւն):

4. Բննադատութիւն Հայրուսակի, Վիեննա, 1925, Ժ–Դ եւ 215 էջ (Սարգսի մատենադարան, ձԹ: Արտատպուած ՀԱԿ, 1921–1925, եւ ոչ թէ լոկ 1921, ինչպէս գրել է Ա. Ա. Արքահամեանը):

Բ. – ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

1. Առ գրասէր Ատոմ, «Մասիս» 1884, Մարտ:
2. Բողոք ի Ստոքհոլմէ (Մ. Նուպարեանի Ֆրանս.–Հայերէն բառարանի մասին), Կ. Պոլիս, «Մասիս», 1884, Թ. 3600–3602: (Դիւանում նաեւ 8:0, 20:36, 13 էջ վրիպակներով ուղղում եւ յանելում):
3. Կորիւն Վարդապետի մի հատուած սրբագրեալ, «Բանասէր», 1887, Ա, 12–17:
4. Գրիգորի Մագիստրոսի «Գաղատական» քաղթի մեկնութիւն ի նմին իսկ Մագիստրոսէ, «Բանասէր», Փարիզ, 1900, Բ, էջ 119–140:
5. Դաւթի Սալաճորեցոյ Գովասանք ծաղկանց, «Բանասէր», Փարիզ, Բ, Գ, 1901, էջ 87–129:
6. Աստուածաշունչի թարգմանութիւնը եւ թարգմանիչները, «Լոյս» ջրթերթ., Կ. Պոլիս, 1906, Թ. 50, էջ 1185:
7. [Դիտողութիւններ], ՀԱ, 1908, տիւն 96, 155–156, 221: 1909, տիւն. 216–217:
8. Երեք գիտելիք Յովհաննու Մանդակունայ եւ մի գիտելիք իմ Գաղղիերէն–Հայերէն բառարանի մասին, «Լուսայ, Հանդէս Գրահան», Թիֆլիս, 1901, Բ, էջ 213:
9. Իմ կարծիք գլրկին թարգմանութեանց եկեղեցական պատմութեան Սոկրատայ Սփոյաստիկոսի եւ գնոցին թարգմանչաց, «Հանդէս Ամսօրեայ», 1893, տիւն. 273–278:
10. Հայերէն հին գրականութեան խնդիրներ. Մովսէս Խորենացի, «Մշակ», Թիֆլիս, 1898, Թ. 192–195, 203, 206, 216–217, 137: 1899, Թ. 16–17:
11. Ղազարայ Փարպեցոյ Պատմութեան Հայոց Յառաջարան: Փորձ կարգադրման յետելառաջ հատուածոցն, եւ ցուցումն տեղեաց յորս թուղթ անկեալ է ի սկզբագիր օրինակէն, «Լուսայ», Թիֆլիս, 1896, Բ, էջ 309–328:

12. Մեր նախնացմէ ձեռուրնիս հասած ձիարուծութեան երկու գրուածքներ, «Բաղմարէպ», 1867, Դեկտեմբեր, էջ 353-359, Հ[այր] Յ[արութիւն] Թ[երգոնց] ստորադրութեամբ:

13. Տեղեկութիւնք ի գիրս Պատմութեան Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողիկ կոչեցելոյ, «Հանդէս դրականական եւ պատմական», Մոսկուա, Բ, 1889, էջ 291-332: (ՀԱ, 1921, 90 եւ ՊՀ, 1974, 3, էջ 244, ծան. 3 Տեղեկութիւնք. «Լրաբեր», 1979, 5, էջ 103, ծան. 3 «Տեղեկութիւնք ի գիրս պատմութիւն...»):

14. Քննադատութիւն նուպաքեան քարգմանութեան վիկտոր Հիւգոյի Notre-Dame-ին, « Բ », Կ. Պոլիս, 1884:

15. Քննական ուսումնասիրութիւնք հայ նախնաց բնագրաց: Ա. Թովմա Արծրունի եւ Անանուն Արծրունի երկու այլեւայլ պատմագիրքի եւ, «Բաղմարէպ», 1905, 5, էջ 227-231. 6, էջ 264-271. 7-8, էջ 328-337. 9, էջ 398-407. 10, էջ 464-476:

16. Քննասէր. ինքնագրութիւնք Նորայրի, Ստոքհոլմ, 1887, 15 Մախիս, պրակ Ա, 64 էջ, բովանդակութիւն՝ «Ձեկուցումն, Եղնդկայ Կողբացւոյ երկու հատուածը սրբագրեալ, Կորիւն Վարդապետի հատուած սրբագրեալ, Փաւստոս Բիւղանդ. եւ իւր Պատմութիւնն Հայոց»: Պրակ Բ, 1887, 3 Դեկտեմբեր, 64 էջ, բովանդակութիւն՝ «Ձեկուցումն, Նուէրք առ Քննասէրն, Մովսէս Խորենացի յորո՞ւմ ամի գրած է զիւր Պատմութիւնն Հայոց, Մովսէս Խորենացի եւ թարգմանութիւնք իւր, Վերագործութիւնք»:

17. Քննութիւն Մալխասեան հրատարակութեանց Ագաթանգեղոսի եւ Ղազարայ Փարպեցւոյ, «Յուշարձան», Վիեննա, 1911, էջ 161-174:

18. De l'urgence d'une édition critique des textes arméniens. Rome, 1892, 12 p., (Reale Accademia dei Lincei. Rendiconti, 1892, p. 807-818).

Ծան. — Պոլսի, Ձմիւռնիայի, Թիֆլիսի եւ Մոսկուայի մամուլում ունի նաեւ մանր յօդուածներ, իր Ֆրանս. — հայ. բառարանի մասին տեղեկութիւններ, յայտարարութիւններ եւ այլն, Շուէդիայի մամուլում՝ 1896 թ. հայկ. ջարդերի վերաբերեալ:

Գ. — ԴԻԻԱՆԸ ԵՒ ՆՐԱ ՑԱՆԿԸ

Սկզբից եւեթ ասել ենք, որ Նորայրի դիւանը՝ գրադարանը եւ անտիպ մնացած ձեռագրերը պահուում են Շուէդիայի Գէտեբորգ (Göteborg կամ Gothembourg) քաղաքի համալսարանի կենտրոնական գրադարանում (Göteborgs universitet, Universitetsbibliotek, Centralbibliotek, Box 5096, S-402. 22, Göteborg):

Մամուլում առաջին անգամ Ն. Ալիքեանն է յայտարարել (ՀԱ, 1921, էջ 94), թէ Նորայրի կարեւորագոյն աշխատութիւններն անտիպ են մնացել. նա դրանք չի տեսել, այլ լսել է դրանց մասին եւ ն. տ., էջ 95-96ում նշել 12 դործի անուն: Նա 1911ին մեղմով յորդորել է Նորայրին, որ հրապարակ հանի իր անտիպ աշխատանքները. հեղինակը իրաւամբ պատասխանել է, թէ ո՛ր փողով. չէ՞ որ իր ծախսերով եւ վնասով տպագրել էր տուել «Հայկական բառաքնութիւն» դիւրքը, կնոջ մեկենասութեամբ Ֆրանս. — հայ. բառարանը, որից հաշար օրինակ տեւ մնում էր, «Քննասէր» ի իր յօդուածների ժողովածուի երկու պրակները: Յետագայում պարզուել է, որ Նորայրը կնոջից մնացած որոշ գումար ունեցել է, բայց դա ո՛ր մէկ հրատարակութեան բաւական կը լինէր, եւ վերջ ի վերջոյ «Մշակ արժանի է վարձու իւրում»: Ն. Ալիքեանը 1921ին տեղեակ չի եղել, թէ «Խնչ եղան, ո՛ւր մնացին իւր ձեռագիր աշխատութիւնները: Ազգն սմէն գնով տէր լըլալու է անոնց՝ պահպանելու կորստէ»¹⁹: Դրանք «անհետացել էին», թէեւ Նորայրը մահացել էր Վենետիկում, Ս. Ղազարից ոչ հեռու, որտեղից երբեմն տալիս էին նրա այցելութեան, ինչպէս ցոյց են տալիս դիւանում պահուող նրա նշումները: Ն. Ալիքեանը որոնել է այդ ձեռագրերը. նրա դիւանում պահուում է ոմն Գուրգէնի նամակը, արեւելահայերէն, հին ուղղագրութեամբ, բայց սխալներով, եւ գրողը հաւանաբար պարսկահայ էր իր քարքառային բառերով. գրուած է 1.7.1938ին, Շուէդիայից: Գուրգէնը, որ Ստոկհոլմի չրջակայքում է բնակուելիս եղել, Ն. Ալիքեանի խնդրանքով փնտռել է Նորայրի անտիպ գործերը: Նա գտել է կանանց բարեսիրական այն միութիւնը, որին Նորայրը կտակել է իր ունեցուածքը: Գուրգէնին պատասխանում են, թէ իրենց մօտ ոչ մի ձեռագիր չկայ. Ֆրանս. — հայ. (թէ՞ հայ. — ֆրանս.) բառարանից մի օրինակ են ունեցել, այն էլ ուղարկել են Գահիրէի Հայոց առաջնորդարանին: Գուրգէնը գտնում է Տիկ. Սելմա Նորայրի քոյրը աղջկան. սա որոշ յուշեր է պատմում, ասկայն ոչինչ չի գիտի. ընտանիքները միմեանց չեն յաճախել, քանի որ Օր. Սելման բոլորի կամքին հակառակ է մամուլանցել Պրն. Նորայրի հետ:

Նախանձախնդիր առաջին Հայը, որ տեսնում եւ Հայերիս համար մամուլում յայտնաբերում է Նորայրի անտիպ գործերը, Սուրէն Երզնկեանն է, ծածկանունով Ս. Լօրենցի²⁰: Նա իր հաղորդումն ու-

19. ՀԱ, 1921, էջ 96:

20. Ըստ Գ. Ստեփանեանի «Կենսագրական բառարան» Սուրէն Երզնկեանը (1881-1963) սովորել է Թիֆլիսում, Մոսկուայի, Փարիզի եւ Ժնևի համալսարաններում, եղել է հրապարակախօս, 1920ից յետոյ Սով. Միութեան դիւանատան պաշտօնային սկանդինական երկրներում. 1930ին «մեկնել է արտասահման» բառաստական թուականներից «սիրիւքահայ առաջադիմական մամուլում» (Վրա-

ղարկում է եղիպտահայ թեմի առաջնորդ Մամբրէ արքեպիսկոպոս Սիրունեանին 1947ին, սա էլ՝ էջմիածին վեհափառին, որ հրատարակել է տալիս «էջմիածին» հանդէսի 1949ի Մարտ-Ապրիլի համարում, էջ 64-68՝ «Նորայր Բիւզանդացու անտիպ գրական ժառանգութիւնը»: Լօրեղլին մի աւելի կարճ հաղորդում հրատարակել է նաեւ «Սիւն»ում, 1950, էջ 58-59, եւ այլուր. «Նորայր Բիւզանդացու անտիպ գրական ժառանգութեան դժբախտ բախտի մասին արդէն բաւական գրած եմ Սփիւռքի պարբերականներում» (ն.տ., էջ 58): Հետեւեալ «էջմիածին»ի ընդարձակ հաղորդմանը, որ երկու մաս ունի՝ նամակ Մ. Սիրունեանին եւ «անտիպ գրական ժառանգութեան» յայտնաբերման պատմութիւնը եւ նկարագրութիւնը: Լօրեղլին երկու տեղում էլ սկսում է Նորայրի կշտամբանքով. նա բարեսիրական ինչ-որ օտար ընկերութեան է նուիրել իր փողը, գրադարանն ու ձեռագրերը. Լօրեղլուն տրուել է կտակի պատճէնը. «էջմիածին»ում յայտարարել է գումարը՝ 125 հազար շուէդ. քրոն, իսկ «Սիւն»ում՝ 150 հազար (35 հազար դոլար): Նորայրը մոռացել է, որ «Հայ ժողովուրդը գոյութիւն ունի աշխարհիս երեսին եւ ինքն էլ այդ հայութեան մէկ դաւակն է»²¹. «Նա իրաւունք չունէր իր կէս դարուայ գրական-գիտական աշխատանքների արդիւնք ձեռագրերը կտակել չուէդ կանանց հաստատութեան, երբ մենք ունէինք էջմիածին, Երուսաղէմ, Բարեգործական եւ այլ աղաքային հաստատութիւններ»²²: Այսպիսի մեղադրանքներ գրողը տեղեակ էէր Նորայրի դառնակակիծ եւ յուսախաբ կեանքին: Լօրեղլին նամակում գրել է. «Եւ ուսումնասիրած ու ձեռքով էլ փաթաթած եւ կապած ձեռագրերի քանակութիւնը հասնում է քառասուն եւ չորս կապոցների: 1915-1946 թթ. ընթացքում Նորայրի այս ձեռագրերը ընկած են եղել շուէդական կանանց քարե-գործական ընկերութեան, Աստուած պիտէ, ո՛ր նկուղներում, անխնամ վիճակում, առանց տեղեկութիւն ունենալու նրանց գրական-գիտական արժէքի մասին, մինչեւ իմ գրաւոր բողոքները»²³ եւ այլն, ընդդէմը մերն է, որովհետեւ իրեն հակասելով՝ Լօրեղլին էջ 66ում գրել է. «1915 թուից մինչեւ 1922 թուի վերջը պտնուել են այդ ընկերութեան նկուղներում, իսկ 1923 թուից մինչեւ օրս դստնում են Գէօտերորդ քաղաքի գրադարանի նկուղներում, առանց որեւէ ցու-

րեր», «Պայքար» եւ այլն) Հայաստանին համակիր ուղղութեամբ հանդէս է եկել Ս. Լօրեղլի ծածկանունով»:

21. «էջմիածին», 1949, Մարտ-Ապրիլ, էջ 64:

22. «Սիւն», 1950, էջ 58:

23. «էջմիածին», նոյն տեղ: Լօրեղլու այս եւ նման յայտարարութիւնների հիման վրայ Գ. Արզախեանը գրել է. «1946 թուականին Շուէդիայի Գէօտերորդ քաղաքի գրադարանի նկուղներում Ս. Լօրեղլուն յաջողում է գտնել եւ կորստից փրկել Նորայր Բիւզանդացու անտիպ գործերը» («էջմիածին», էջ 36):

ցակագրութեան ու դասաւորման, որպէս թղթերի մի կոյտ արկղները լցուած» (էջ 66-67): Նա իր թղթակցութիւնը գրել է 1947 թ. Յուլիսի 8ին: Էջ 65ում ասել է նաեւ. «Նորայրի անտիպ գրական ժառանգութիւնը այսօր իրենից ներկայացնում է մի խառնիճաղանձ ձեռագրակոյտ, առանց դասաւորման. մատիտով արուած դիտողութիւնները արդէն անընթեռնելի են դառնում, ջնջուած են, թերթերը չորանում ու փշրւում են, ձեռագրերից աւազի անձրեւ է տեղում, երբ ձեռքդ ես վերցնում թերթելու, կարգալու համար». նա իրեն հակասելով՝ հէնց վերջակէտից յետոյ ասել է. «1923 թուին հրաւիրուել էր տեղական Լուսն համալսարանի մի շուէդ ուսանող, Լա-Ֆոնթէն²⁴ Ֆրանսական աղանդունով, որը առանց հայերէնի այլն իսկ իմանալու, մի այնպիսի ապուր էր պատրաստել Նորայրեան ձեռագրերից, որ այսօր այդ ձեռագրերը կարգի բերելու եւ դասաւորելու համար պահանջում է գրեթէ մի ամբողջ տարուայ աշխատանք» (էջ 65): Մի մէջբերում եւս. «Ուսաստանի համալսարանական գրադարանում, ուր իմ պահանջով Գէօտերորդից տեղափոխուել էին Նորայրի ձեռագրերը, ես ամիսներ շարունակ դադարել եմ դրանց ուսումնասիրութեամբ» եւ այլն²⁵ (էջ 65): Նա պատմում է նաեւ, թէ դիմելով Գէօտերորդի գրադարանի վարիչին՝ նկուղներից հանել է տուել ձեռագրերը եւ այլն. չես հասկանում՝ ո՛րն է իրականը, ո՛րը՝ հաւանականը, որքա՛նը անապարծութիւն եւ ինքնագովութիւն է: Նա թուարկել է 30 աշխատութեան վերնագիր, նկատել տալով, որ «Բոլոր ձեռագրերը չեն դստնուած եւ գգալի կորուստներ կան» (էջ 67): Մեզ անհրաժեշտ էր ամէն ինչ տեղում ստուգել:

1982 թ. Նոյեմբերի 7-10 Ֆիլադելֆիայի հայագիտական ժողովում ծանօթացանք Շուէդիայի Լուսն քաղաքի համալսարանի դոցենտ եւ հայագետ Bo Johnsonի հետ, որը մեր վնդրանքով աստիջ տեղեկացաւ Նորայրի ձեռագրերի պահպանման վայրի մասին: Նա մեզ հաղորդեց, թէ Ուսաստանի կամ Ստոկհոլմի քաղաքային կամ համալսարանական գրադարաններում ոչինչ չկայ, ամէն ինչ Գէօտերորդի համալսարանի կենտրոնական գրադարանումն է. նա մեզ հաղորդեց նաեւ ձեռագրերի քառնի վարիչ Տիկ. Կարին Վեսմանի (Karin Wessman) հասցէն եւ անունը, որը մեզ հրաւիրեց անձամբ այցելել գրադարան, որովհետեւ այնտեղ հայերէն իմացող չկար: Նա մեզ ուղարկեց ձեռագրերի ինչ-որ շուէդերէն անկապ ցուցակից էջեր ու տեսանք, որ թղթապանակները եւ վաւերագրերը գտնէ համարակալ-

24. ձիւտն է C. Fontaine, տե՛ս ստորեւ, եւ իսկական թուականն է 1927:

25. Սխալուել է Գ. Արզախեանը, որը 1960ին գրել է, թէ Նորայրի ձեռագրերը պահուած են Ուսաստան քաղաքի համալսարանի գրադարանում (տե՛ս «էջմիածին», 1969, էջ 36 եւ 40), իսկ Գ. Ստեփանեանը՝ «պահուած են Ստոկհոլմի համալսարանում»:

ռւած են: Գիտէլինք, որ 1963 թ. հանդուգեալ բանասէր եւ պատմաբան Հայրի Պէրպէրեանը Փարիզից գործուղուել էր Շուէդիա Կիւլ-սկնկեան Հաստատութեան Վոլդմից, եւ թէ Երեւանում՝ Մատենադարանում եւ Գիտութիւնների Ակադեմիայի Անտրոնական գրադարանում, պահուում են Նորայրի որոշ աշխատութիւնների մանրագրաւէններ, եւ թէ մէկ հատ էլ լեզուարան հանդուգեալ Սերոբ Ղազարեանի մօտ էր:

1982 թ. Դեկտեմբերի 6ից 9, Վադուզի Ղուկասեանց Եղբայրների Հաստատութեան գործողամբ Գէօտեբորգի համալսարանի կենտրոնական գրադարանում, շնորհիւ տնօրէնի եւ մասնաւորապէս Տիկ. Կարին Վեսմանի անսահման բարեացակամութեան եւ վստահութեան, առանձին տեսակում, մեր կնոջ օգնութեամբ ցուցակագրեցինք Նորայրի ամբողջ գիւտը, հինգ մետր երկարութեամբ, բացի գրադարանից, որքան դա հնարաւոր էր մի քանի օրում: Յանկը թարգմանեցինք Ֆրանսերէն եւ մի օրինակն ուղարկեցինք գրադարանին: Տնօրէնութիւնը մեզ նուիրեց Եղնիկի Լերիկ՝ Նորայրի պատրաստած անտիպ բնագրին վերաբերող նիւթերի լուսագատնէները. Եղնիկի քննական նոր հրատարակութեան պատրաստութիւնը գրադարան մեր այցելելու զխաւոր առիթն էր Կղել: Ուստի այսօր կարող ենք քիչ թէ շատ վստահութեամբ ասել, թէ ինչ է պահպանուել Նորայրի անտիպ ձեռագրերի մէջ. բայց սա էլ նշենք, դրանք միայն անտիպ նիւթեր չեն, այլ պահուել են նաեւ հրատարակուած գործերի ձեռագիր օրինակները, աւելի ճիշտ՝ կրկնօրինակները:

Տիկ. Կարին Վեսմանը մեզ հաղորդեց, որ 1922ից մինչեւ 1960 թ. Նորայրի ձեռագրերը պահուելիս են եղել քաղաքային գրադարանում (Göteborgs Stadsbibliotek): Այս գրադարանի բաղամասայ վարիչ Ս. Հայրերգի (S. Hallberg) «Göteborgs Stadsbibliotek det första halvseket 1891-1940», 1941 թ., աշխատութեան էջ 58ում ասուում է, որ քաղաքային գրադարանը 1922 թ. ձեռք է բերել չինական, ճապոնական եւ հայկական գրական-բանասիրական նիւթեր, բայց որում հայկականը Նորայրի բաժինն է, որ գրադարանը գնել է²⁶ Fredrika Bremer-förbundet կազմակերպութիւնից, որն իր հերթին այն տտացել էր Նորայրից կտակով, որովհետեւ Սերմա Եակոբսոնը, Esseldes stiftelser կանանց բարեփրական միութեան անդամ է եղել: Ուստի սա եւս Նորայրի կտակի գրադարանաւորներից մէկն է: 1927 թ. բանասիրական գիտութիւնների շրջանաւարտ Շ. Fontaineը փորձել է դասաւորել ձեռագրերը, բայց չի յաջողուել. «Այժմ - գրել է Ս. Հայրերգը 1941 թ. - ձեռագրերը տեղադրուած

են գրադարանի ձեղնայարկում եւ ներկայանալի վիճակում չեն»: Ս. Լօրելլին մեղադրել է Հայրերգին, «որը տեղեակ չէ թէ իր հաստատութեան մէջ ինչ է կատարուում» (էջ 67). բայց այս մարդը նրան ցոյց տուած կը լինէր իր գրքում գրածը, որի մասին Լօրելլին լուել է. սրա արժանիքը միայն այն է, որ հասկացրել է պահուած ձեռագրերի արժէքը:

Նորայրի ձեռագրերն այսօր պահուում են մեծ խնամքով. որոշ դասաւորութեամբ, որ լիապէս բաւարար չէ. դրուել են թղթապանակների մէջ, որոնք համարակալուած են, համարակալուած են նաեւ վաւերագրերը. որոշ թղթեր, թղթիկներ, թերթիկներ, թղթի կտորներ, դատարկ ծրարներ, նամակներ, բացիկներ, ընտանեկան փաստաթղթեր, ծառերի չորացրած տերեւներ դրուած են տուփերի մէջ: Ինչպէս երեւում է, Նորայրը պահել է իր օգտագործած եւ գծերով ջնջած գրառումները, նշումները, սեւագրութիւնները, մաքրագրութիւնները, որոնք շատ անգամ չեն տարբերուում առաջիններից: Գրեթէ միշտ գրել է թանաքով, շատ քիչ անգամ մատիտով: Թղթերը մեծ մասամբ ծանրաբեռնուած են տարբեր ժամանակներում եւ զանազան առիթներով կատարուած լրացումներով, որով շատ անգամ դժուար է գրանցից գլուխ հանելը, յամենայն դէպս ընթացումը շատ ժամանակ է պահանջում: Կան թղթեր, էջակալուած կամ ոչ տետրեր, որոնք խոստովանալից վերնագրեր ունեն, բայց միայն մի քանի գրքուած էջ են պարունակում. նշումներ եւ ուրուագծեր աւելի շատ են, քան աւարտուած աշխատանքներ. Նորայրը շատ բանի է ձեռնարկել, բայց քիչ բան է աւարտել, այն էլ միշտ վերանայել է ու լրացրել: Երկար ամիսներ է անհրաժեշտ բոլոր թղթերն ուսումնասիրելու եւ վերադասաւորելու, նոյն նիւթին վերաբերողները ի մի բերելու եւ միանգամայն աւելորդ դարձածները որոշելու համար: Մեր ցուցակագրումը առաջին փորձն է: Ս. Լօրելլին թղթերը նայել է, այն էլ կազմումը առաջին փորձն է: Ս. Լօրելլին թղթերը նայել է, այն էլ երկարօրէն, ինչպէս գրել է, Ուլստալայի համալսարանի գրադարանում, ուր փոխ են տրուել նրա խնդրանքով, եւ որոշ վաւերագրերի վրայ իր ո՛ր օրը (ինչպէս 3 Օգոստոս 1946) եւ որտե՛ղ նայելու նշումներն է թողել ապօրինաբար եւ իր անընթեռնելի ստորագրութեամբ, վատ դասաւորութեան մասին դանդաղութեւն է, բայց ցուցակագրման ոչ մի փորձ չի արել, կամ մեզ յայտնի չէ: Յամենայն դէպս հիմա գտնէ թղթերից «աւազի անձրեւ չի տեղում», ինչպէս գրել է նա խիստ չափազանցութեամբ: Դիւանի իսկական իրականութեան չեն համապատասխանում նրա նշած վերնագրերը իբրեւ աշխատութիւնների խորագրեր. պարզ ընդօրինակութիւնները, որ Նորայրը կատարել է փոխ առած ձեռագրերից, ներկայացրել է որպէս գործեր կամ էլ նշել է որպէս աւարտուած աշխատութիւններ, որոնք այդպիսով չեն: Օրինակ՝ նա գրել է «Եղնիկ Կողբացի. - էջ 235» («էջ-

26. Իսկ Ս. Լօրելլին գրադարանագիր կամ անտեղեակութեամբ գրել է, թէ ձեռագրերը «այսօր ընթացիկ քաղաքային գրադարանին» (էջ 67) միածին», էջ 65):

ՆՈՐԱՅՐ Ն. ԲԻԻԶԱՆԴԱՅՈՒ ԴԻԻԱՆԻ ՆԻԹԵՐԻ ՅԱՆԿ

ՄԱՐՏԻՐՈՍ ԵՒ ԱՐԼԵԹ ՄԻՆԱՍԵԱՆ

(Վերջում տե՛ս կարեւորագոյն ինքնուրոյն նիւթերի ցանկը համար-
ներով: Փակագծերում դրուածները մեզնից են):

Norayr, Fol. 1A. Sid. 1-898

1. Բառագիրքի գաղղիներէն լեզուէ ի հայերէն. Բառագիրք գաղղիներէն Եւ տանկերէն լեզուաց: Յօրինեալ հետեւողութեամբ բառարանացն Լիդրէի Գաղղիական Ակադիմիոյ եւ ֆոխացեալ վկայութեամբ ի ֆախեաց ի ձեռն նորայր Ն. Բիւզանդացւոյ, էջ 1-898:

(Մաքրագրութիւն, թուրքերէն թարգմանութիւնները չկան. այս թանկագին բառարանը «Բառագիրք ի գաղղիներէն լեզուէ ի հայերէն, հետեւողութեամբ բառարանացն Եմիլ Լիդրէի եւ Գաղղիական Ակադեմիոյ, յօրինեաց նորայր Ն. Բիւզանդացի» խորագրով լոյս է տեսել Կ. Պոլսում 1884 թ.):

Fol. 1B. Sid. 899-1522

2. (Նախորդի շար., էջ 899-1522, մաքրագրութիւն):

Fol. 1C. Sid. 1523-2144

3. (Նախորդի շար., էջ 1523-2144, մաքրագրութիւն):

Fol. 2: Sid. 1-574

4. (Վերեւում նշուած Բառագիրքի սեւագրութեան էջեր, 1-574, բաղմամբ թիւ ջնջումներով):

Fol. 3: 1-16

5. 3:1 Հ. Ղեւոնդ Վ. Ալիշան, Հայքուսակ կամ Հայկական բուսաբանութիւն, Վերնաթիւ - Ս. Ղազար, 1895: Բնագրատութիւն նորայր Ն. Բիւզանդացւոյ, Զնչելիք, Ուղղելիք, եւ Յաւելիք, էջ 1-280 (վերջում՝ «Իմով ձեռամբ դրեցի»: Տե՛ս տպագրութեան ցանկում «Քննադատութիւն Հայ բուսակի»):
6. 3:2 Անանիա Շիրակացի, Ի Զատիկն, 18 էջ (բնագիր):
7. ՅԱնանիայ Շիրակացւոյ, էջ 1-68, 9 Սեպտեմբեր 1895:
8. Մովսեսի Խորենացւոյ եւ Անդրէասի: Տես զվերնագիրն ի Բաղմամբէս, 1851, 71, ր: (Երեքի էլ վերջում՝ «Ընդօրինակեցի յընդօրինակութեան Գիւսթաւանայի Աղանեան»):

9. 3:3 Ժամանակագրութիւն Մատթէոսի վարդապետի Ուռհայեցւոյ, էջ 1-32: (Ընդօրինակել է 1894 թ. Սեպտեմբերի 25ին, ձախ լուսանցքում նշել է տպ. ի էջերը, էջատակերում ունի ձեռագրային որոշ ծան. ներք: Չի նշել՝ տպագրակէս ընդօրինակութիւն է, թէ տպարաստուած բնագիր. յամենայն դէպս առանձին գլուխներ են):
10. 3:4 Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերցոյ վարդապետի, էջ 1-31, Ստոքհոլմ, 18 Դեկտեմբեր 1894 - Ստոքհոլմ, 6 Մարտ 1895: (Նշուած չէ՝ տպագրակէս ընդօրինակութիւն է, թէ տպարաստուած բնագիր: Էջատակում՝ ձեռագրի եւ տպ. ի նշումներ: Մագրագիր: էջ 131. «Յանկ անուանց» առանց ցանկի եւ ծան. ներքի):
11. 3:5 Մէկ միլիոն ծաղրաբանութիւնք, 1867-09-5, էջ 1-71: (Թիւ 1-319 համարակալուած զուարճալիքների հաւաքածու):
12. 3:6, 7, 8, 9, 10, 11, 12 Ընդօրինակութիւնք հայերէն ձեռագրաց եւ փաղուածք:
13. 3:13 (Շուէդերէն իր մի ճառը, հաւանաբար հայկական հարցի մասին, էջ 1-8, անթուական):
14. 3:14 La question arménienne. A propos du récent massacre des Arméniens par les Turcs. (3 էջ, լոյս է տեսել Ստոքհոլմի «Afton-bladet» թերթում, 21 Նոյեմբեր 1894, «Հայկական հարցը: Թուրքերի կողմից Հայերի նորագոյն ջարդի առթիւ»):
15. 3:15 Նարեկայ վանից վանականին Գրիգորի Տաղբ բաց ի տպելոյն, արտաքոյ ի գանձագիրս, 4 էջ, «Տաղ 40 օրեայ դալստեան Տեառն, ի Գրիգորէ Նարեկացւոյ»:
16. 3:16 Նոր Ագաբանգեղոսի եւ Նոր Ղ. Փարպեցւոյ դոյզն ֆաշակ, 24 Յունիս-30 Յունիս 1911, 24 էջ: (Քննութիւն Մալխասեան հրատարակութեանց Աղաթանգեղոսի եւ Ղազարայ Փարպեցւոյ վերնագրով լոյս տեսաւ «Յուշարձան»ում, Վիեննա, 1911, էջ 161-174):

Fol. 4: 1-14

17. 4:1 Յաւելուած «Հատընտիր Տաղարանիս», էջ 385-646 1906-1911 թթ., (մաքուր ընդօրինակութիւն. էջ 1-384 տե՛ս թ. 225):
18. 4:2 Ընդարձակ բարոյական Տաղ, վերագրեալ «Առաջնոց», «Ումմն իմաստ-լնոյ», «Իմաստնոց», «Յովհաննէս Պուզ վարդապետի կամ լոկ Պուզ վարդապետի», «Ֆրկան», «Պիւլիլի վարդապետի», 1-38 էջ, 28 Սեպտեմբեր 1906 (մաքուր ընդօրինակութիւն):
19. 4:3 Պատմութիւն Մանկան Գարմանի Ասման որդւոյ Զարմանագան Բա-գաւորին Ասորեստանեայց: Ընդօրինակութիւն տպագրին Կոստանդնուպոլսի ՌՃՀԳ Թուականին Հայոց, Քրիստոսի 1724, 1-49 էջ, 11 Դեկտեմբեր 1906:
20. 4:4 Տաղք Յովհաննէս վարդապետի երգնկայեցւոյ, էջ 1-24, 27 Հոկտեմբեր 1906 (մաքուր ընդօրինակութիւն):
21. 4:5 Պղնձէ փաղաք, ըստ Ե. Տաղարանին Ս. Ղազարու, թիւ 2 հո. 529, ր. դ., երեսք 1-99: Ընդօրինակեմ նոյնութեամբ, անփոփոխ տպագրակէս թիւն եւ զիւտագրութիւն, գլխագրելով միայն գլխատու անուանս. 31 Օգոստոս 1906, էջ 1-30: (Տե՛ս ստորեւ 4:0, 1:3 կամ թ. 38):
22. 4:6 Առաքելի Սիւնեցւոյ Տաղաշափութիւնք: 27 Աւգոստոս 1906, էջ 1-85 (մաքրագիր):

23. 4:7 Նստալիք (Զամարակալուած 49 էջ, իր գրած նամակների սևագրութիւններ, Պոլսից, 18 Ապրիլի 1869 - 16 Հոկ. 1871):
24. 4:8, 9, 10, 11 Բառագիրք, Յունիս 5, 1861:
(Բարրառային բառերի աշխարհարար եւ թուրքերէն թարգմանութիւն, սևագրութիւն, Ա-Վ սկզբնատուերով, 35 էջ):
25. 4:12 Գաւառական բառք, 1861, Մայիս 26, 12 էջ (Ա-Կ կիսատ, սևագիր):
26. 4:13 Բառք Նախնեաց արտաբոյ ի Հայկազեան բառարանէն, 1861, Յունիս 28 (18 էջանոց տետր, որ 4:0, 11:6-ի սկիզբն է: Բառեր իրենց վերա-յուրիւններով):
27. 4:14 Վիպասանական քերթուած, 24 էջ:
(Թերի ուսումնասիրութիւն, ձեռագիրն աշակերտական շրջանի է, դուցէ ինչ-որ ընթերցանութեան մշակում):

Fol. 5 Privata Handlingar

28. (Անձնական եւ ընտանեկան փաստաթղթեր՝ կաթողիկէ կնոնքի եւ ա-մուսնութեան վիճակի, ամուսնութեան պայմանագրի սևագրութիւն-ներ եւ այլն):

Fol. 6 Prässade växter

29. (Զորացրած ծաղիկներ եւ ծառերի տերեւներ):

Fol. 7, 7: 37

30. 7:1 (Անվերնագիր, քառորդ էջի լայնութեամբ 23 թերթիկի վրայ նշում-ներ հայերէն բառերի մասին, միանշանակ անձնական):
31. 7:2 (Նախորդի պէս):
32. 7:3 (Զրացատրուած բառերի ցանկ, 48 էջ):
33. 7:4 (Բարսեղի վեցարեայ-ից որոշ բառեր, 32 էջ):
